ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի մարտի 16-ի թիվ 80-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՀՐԱՉՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ ՉՕԳՏԱԳՈՐԾԱԾ ՄԱՍԵՐԸ, ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԱՍԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 15-ի N 1287-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 20-րդ կետը և Հ.Գևորգյանի 2026 թվականի մարտի 16-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Հրաչյա Գևորգյանին տրամադրել ամենամյա նվազագույն արձակուրդների չօգտագործած մասերը 2011 թվականի նոյեմբերի 25-ից 2012 թվականի նոյեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածի համար՝ 9 աշխատանքային օր տևողությամբ, 2018 թվականի նոյեմբերի 25-ից 2019 թվականի նոյեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածի համար՝ 16 աշխատանքային օր տևողությամբ, ամենամյա նվազագույն արձակուրդի մասը և լրացուցիչ արձակուրդը 2025 թվականի նոյեմբերի 25-ից 2026 նոյեմբերի 25-ը ընկած ժամանակահատվածի համար՝ 3 աշխատանքային օր տևողությամբ 2026 թվականի ապրիլի 6-ից մայիսի 15-ը ներառյալ:

2.Հրաչյա Գևորգյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում գլխավոր քարտուղարի պարտականությունները վերապահել մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Նորայր Գալստյանին:

3.Ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ <<Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն

վճարել նաև լրացուցիչ միանվագ արձակուրդային վճար՝ իր միջին ամսական աշխատավարձի չափով:

4. Հրաչյա Գևորգյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի մայիսի 18-ից:

<< Արագածոտնի մարզպետ

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 3/17/2026 4:05:59 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309820457

Ս.ՄՈՎՍԻՍՅԱՆ

2026թ. մարտի 16

ք.Աշտարակ